

Օսմանյան բանկի գրավումն ու Խանասորի արշավանքը «Դրոշակ» պարբերականի էջերում

Հովսեփյան Կարինե Գ.

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի հայցորդ (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0009-0002-0019-6472>

karine.hovsepyan.1985@mail.ru

ՀՏԳ՝ 93/94; EDN: CZHHLI

DOI: 10.58587/18292437-2024.1-13

Հանգուցարաներ՝ Օսմանյան բանկ, Դաշնակցություն, Բաբկեն Սյունի, Սամաթիա, ազատագրական պայքար, Խանասոր, արշավանք, Մազրիկ, վրեժխնդրություն

Захват Оттоманского банка и поход Ханасора на страницах журнала "Дрошак"

Овсепян Карине Г.

ЕГУ, Кафедра истории Армении, соискатель (Ереван, РА)

Анотация. В истории народно-освободительной борьбы Западной Армении значимое место занимает такие наступательные действия, как захват Оттоманского банка и поход Ханасора. К этим вопросам ссылались много авторов, но в статье борьба представлена по данным журнала "Дрошак", который с наибольшей точностью отразила события тех лет, поскольку его сведения были дополнены письмами непосредственных участников и корифеев той борьбы, написанными под свежими впечатлениями в суматохе событий. Это обстоятельство имеет большое значение, поскольку мемуары деятелей освобождения были написаны спустя годы после событий и многие подробные детали отсутствовали. "Дрошак" призван заполнить этот пробел. Организатор этих наступлений партия Дашнакцутюн надеялся этими действиями привлечь внимание европейских государств к армянским реформам, которые так и не осуществились.

Ключевые слова: Оттоманский банк, Дашнакцутюн, Бабкен Сюни, освободительная борьба, Саматия, Ханасор, поход, Мазрик, месть

The Capture of the Ottoman Bank and the Campaign of Khanasor on the Magazine "Droshak"

Hovsepyan Karine G.

Department of History of Armenia at Yerevan State University, Applicant (Yerevan, RA)

Abstract. In the history of the people's liberation struggle of Western Armenia, significant place is taken by such offensive actions as the capture of the Ottoman bank and the campaign of Khanasor. Many authors referred to these issues, but in the article the struggle is presented according to the data of the magazine "Droshak", which reflected the events of those years with the greatest accuracy, since its information was supplemented by letters from direct participants and luminaries of that struggle, written under fresh impressions in the turmoil of events. This circumstance is of great importance, fruition since the memoirs of the liberation figure were written years events and many detailed were missing. "Droshak" is designed to fill this gap. The organizer of these offensives, the Dashnaktsutyun party, hoped with these actions to attract the attention of European states to the Armenian reforms, which never came to realizing.

Keywords: Ottoman bank, Dashnaktsutyun, Babken Syuni, liberation struggle, Samatia, Khanasor, campaign, Mazrik, revenge

Արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի ամենաաղմկահարույց դրվագներից մեկը, 1896 թ. Օսմանյան բանկի գրավումն էր, որը լայն արձագանք գտավ ոչ միայն «Դրոշակ»-ում, ոչ միայն ողջ Թուրքիայում, այլ ամբողջ եվրոպական մամուլում իր հակասական տեսակետներով: Սա թերևս առաջին նախադեպն էր, երբ Դաշնակցությունը թուրքական հայահալած քաղաքականության դեմ նախապատրաստում էր ոչ թե պաշտպանական քայլեր, այլ հարձակողական գործողություն: Այն հաջողությամբ իրականացնելու պարագայում կուսակցությունը հույս ուներ շահել Մեծ տերությունների ուշադրությունը, նրանց ստիպելով կատարել իրենց հանձն առած պարտականությունները՝

այն է հետամուտ լինել թուրքիայի ստանձնած հայկական բարենորոգումների իրագործմանը: Սակայն իրադարձություններն այլ ընթացք և ավարտ ունեցան:

Ներկայացնենք իրադարձություններն իրենց ճիշտ հերթականությամբ.

1896 թ. ամռան կեսերին Տանկահայաստանում տիրում էր գերեզմանային լուռություն: Թվում էր, թե այս մի շարք կոտորածներն ու ջարդերը ընդմիջտ լռեցրել են հեղափոխական շեփորը: Սակայն անդորրը թվացյալ էր, քանզի հեղափոխականների շրջանում թափառում էր վրեժի ուրվականը և Դաշնակցությունն ամբողջ թափով պատրաստվում էր մի վճռական հարվածի, որն այս անգամ պիտի լիներ հենց սուլթանության

արտում, դիպչեր ոչ միայն Թուրքիայի, այլև իրենց շահերի համար Թուրքիայի «բարեկամն» ու «դաշնակիցը» դարձած և միաժամանակ հայկական բարենորոգումների երաշխավորը հանդիսացող Եվրոպական պետությունների շահերին: Կազմակերպությունն այս նպատակով արդեն 1896 թ.-ին Պոլիս է ուղարկում կարևոր ուժերի մի մասը՝ հուլիսին այստեղ էին արդեն Վարդ Պատրիկեանը (Վարդո, Արվախի) և Սմբատ Խաչատրեանը (Բորիս), այնտեղ էին նաև «Դրոշակ»-ի խմբագրության կարգադրությամբ Միքայել Տեր Մարտիրոսեանը (Մար-Շիմոն կամ Մար), Հայկ Թերիքեանը (Հրաչ, Նանսենի ուսանողներից), Սարգիս Սրենցը և Լևոն Նևրուզը: Նրանք բոլորը պետք է գործակցեին Պոլսի Կենտրոնական Կոմիտեի հետ ռազմամթերքի ամբարման և բաշխման, ռումբերի պատրաստման և փոխադրման աշխատանքների շուրջ:

Օգոստոսի սկզբներին խմբագրության հանձնարարությամբ Պոլիս է գալիս Նանսենի Երկրագործական վարժարանի մեկ այլ սան՝ Արմեն Գարոն: Վերջինիս հուշերի համաձայն կիրակի՝ օգոստոսի 4-ին էր, որ ղեկավար ընկերների ժողովը վերջնականապես կանգ առավ Օսմանյան Դրամատան գրավման և միաժամանակ զանազան թաղամասերում պետական շենքերի և գորանոցների վրա ռումբային հարձակման որոշման վրա [6, էջեր 106-107]:

Արմեն Գարոն գրում է. «Մայիս ամսին մեծ պետությունների դեսպանները պաշտոնապես սուլթանին հայտարարում են, որ Պոլսում նոր խռովություններ ծագելու առաջին իսկ առիթով իրենք իրենց 12 մարտանավերի զինվորներին ցամաք կհանեն կարգը վերահսկելու համար: Եվ այդ նպատակով ենք մենք ընտրել Օսմանյան Բանկի գրավումը, իբրև միջոց ստիպելու դեսպաններին իրենց սպառնալիքը գործի դնել: Մեզ հայտնի է, որ թեև բանկը անունով Օսմանյան է, սակայն իրականում եվրոպական հաստատություն է» [6, էջ 108]:

Կենտրոնական Կոմիտեն որոշեց ձեռնարկը հետաձգել չորեքշաբթի՝ օգոստոսի 14-ին: Դրամատան գրավման գործողության ղեկավար նշանակվեց Բաբկեն Սյունին, օգնական ունենալով Արմեն Գարոյին, ով նաև որպես վարժ ֆրանսախոս, պիտի լիներ հավանական բանակցող:

Դրամատան գրավումը պիտի սկսեր կեսօրին՝ ժամը 12-ին՝ 75 հոգով և 200 ռումբով: Միաժամանակ Սամաթիոյի տղաները՝ Խաչիկ Գնունիի, Արտ. Անդրեասեանի և Արտ. Միսաքեանի ղեկավարությամբ ռումբերով պիտի հարձակվեին գորանոցի վրա, որ գորքը փողոց դուրս գար, նախօրոք գրաված դիրքերից ռումբերի տարափ տեղալ նրանց վրա: Լևոն Նևրուզը հավաստիանալով, որ դրամատունը գրավված է տղաների կողմից, պիտի հանդիպեր Եվրոպական պետությունների դեսպանատան

ներկայացուցիչներին նրանց հանձնելու համար Պոլսի Կենտ. Կոմիտեի հայտարարագրերը: Այս հայտարարագրերը, ըստ էության, ֆրանսերենով խմբագրված կարճ պահանջագրեր էին ստորագրված Բ. Սյունիի, Հրաչի, Սև Աշոտի և Ա. Գարոյի կողմից իբրև ՀՅԴ Պոլսի Կ. Կոմիտեի ներկայացուցիչներ: Գրությունում ասվում էր.

«Մեր պահանջներն են 1) Ապահովել միջազգային միջանոցությամբ սակրոջ երկրի խաղաղությունը, 2) Ընդունել բոլոր այն պահանջները, որ դրել է Դաշնակցության Պոլսի Կ. Կոմիտեն. 3) Մեր դեմ ուժ չգործադրել. 4) Կյանքի կատարյալ ապահովություն թե դրամատան ներսում գտնվողների, թե քաղաքի այլ մասերում խառնակությունների մասնակցողների համար: Դրամատան շարժական գույքը, դրամը կմնա անվնաս մինչև պահանջների կատարումը: Հակառակ պարագայում՝ բոլոր թողթերը և դրամը կոչնչացնենք և մենք էլ ծառայողների հետ միասին դրամատան փրատակների սակ կգտնենք մեր մահը: Մենք ստիպված ենք այս ծայրահեղ միջոցներին:

Մարդկության դատասպարտելի անտարբերությունն է, որ մեզ հասցրել է այս աստիճանի» [11, էջ 151]:

Միաժամանակ տպագրված էին 2 «շրջաբերականներ», որոնք ծրագրված էին հրապարակ հանելու օգոստոսի 14-ին՝ հարձակումից անմիջապես առաջ, մեկը թուրքերենով և ուղղված թուրք բնակչությանը, նրան հայտնելու, որ հեղափոխականների կռիվը իրենց դեմ չէ ուղղված, սուլթանի և թուրք կառավարության: Երկրորդի մեջ (միաժամանակ ֆրանսերեն, թուրքերեն և հայերեն) բանաձևում էին Պոլսի Կ. Կոմիտեի 12 պահանջները. «1) Նշանակել ծագումով և ազգությամբ եվրոպացի բարձր կոմիսար Հայաստանի համար՝ ընտրված 6 Մեծ պետությունների կողմից.....12) Եվրոպական տերությունների ներկայացուցիչներից առժամյա հանձնաժողով կազմել, որը Հայաստանի գլխավոր քաղաքներից մեկում հաստատվելով պիտի հսկեր վերոհիշյալ հոդվածների գործադրումը» [4, էջեր 164-167]:

Օգոստոսի 13 գիշերը վերջին խորհրդակցությունն էր և վերջին ընթրիքը., «Ընկերներ, - ասում է Բաբկեն Սյունին,- գիտեմ, որ պիտի մեռնենք, միակ փախազս է, որ ողջ մնացողները ավելի կատաղի կերպով շարունակեն մեր սուրբ գործը, լուծեն մեր հարյուր հազար սրահողիտող եղած եղբայրների և քույրերի վրեժը և ազատեն մեր դժբախտ հայրենիքը...» [4, էջեր 164-167]: Նշանակվեցին 6 հոգի հարձակումը սկսելու, պահակներին սպանելու և մյուսներին դրամատան մուտքի ազդանշան տալու համար: Կարգախոս ընտրվեց «Ազատություն» բառը:

Օգոստոսի 14-ի առավոտյան դրամատան գործի մասնակիցները սկսեցին հավաքվել Ղալաթիո անգլիական դպրոցում (ժամադրավայր), բայց 75-ի փոխարեն մինչև կեսօր գալիս

են 26 ընկերներ միայն: Որոշվում է ամեն գնով իրականացնել ծրագիրը:

Նախորոք որոշված էր, որ, նախ Արմեն Գարոն պիտի մտնեք ներս իբրև հաճախորդ, ապա իրեն պիտի հետևեին 6 նախահարձակները՝ չեզոքացնելով պահակներին, մյուսները պիտի ներս խուժեին ռումբերի և ռազմական պաշարով, հետապահ ունենալով Բաբկեն Սյունուն: Դուռը փակվելուց հետո զանազան հարկերում պիտի հարմար դիրք գրավեին: Գարոն հսկողության տակ պիտի պահեր դրամատան պաշտոնյաներին: Հրաչը պիտի բարձրանար վերևի հարկերը, թաշկինակով նշան տալու համար Լևոն Նևրուզին, որ հայտարարագրերը անհապաղ հասցնի դեսպաններին: Ապա տղաները պիտի որոշեին իրենց անելիքը դեպքերի ընթացքին համաձայն: Մոտավորապես հենց այս ձևով էլ տեղի է ունենում դրամատան գրավումը: Գրավման և նրան հաջորդող կովի մանրամասնությունները լավագույնս ներկայացված են Արմեն Գարոի «Ապրումը օրեր» և Հրաչի՝ «Օսմանյան Բանկի պաշարումը» հուշապատումներում, «Դրոշակ»-ում [6, էջեր 104-110, 11, էջեր 149-151]

Ձեռնարկի դեկավար Բաբկեն Սյունին դրամատուն մտնելու պահին վիրավորվեց և ձեռքերում եղած ռումբերը պայթելով սպանեցին նրան:

Ինչպես նշեցինք, որպես գլխավոր բանակցող հանդես էր գալիս ռուսական դեսպանատան առաջին թարգման Մաքսիմովը: Նա փորձում է ամեն գնով հեղափոխականներին համոզել, որպեսզի նրանք հնարավորինս շուտ դուրս գան դրամատանից և անձնատուր լինեն, նշելով, որ ևս մեկ օր այնտեղ մնալը կարող է նոր գիշերային ջարդերի պատճառ լինել, իսկ դրամատան պայթեցումով նրանք ոչնչի չեն հասնի, բացի 157 անմեղ զոհերից և Եվրոպայի ատելությունը վաստակելուց: Նա հեղափոխականներին խոստանում է ապահով փոխադրել եվրոպական շոգենավ և պատվի երդումով խոստանում հաջորդ օրն իսկ նավի վրա նրանց հանձնել մեծ պետությունների դեսպանների կողմից ստորագրված մի թուղթ, թե բարենորոգումների ծրագիրը անպայման պիտի գործադրվի մինչև 6 ամիս նաև Պոլսում կոտորածներ պիտի տեղի չունենան: Պարզ է, որ այս կեղծ խոստումներից ոչ մեկը չպիտի իրականացվեին: Ի վերջո որոշում են վստահել Մաքսիմովին և դուրս գալ, խուսափելով «ամբողջ գործը վտանգել» և «հաջորդ օրվա կոտորածի» պատասխանատվությունից:

Այսպիսով, տալով 4 զոհ (Բաբկեն Սյունի, բաբերդցի Հովհաննես, բիրթիսցի Մեղրակ Եղիայան և 8 տարեկան Մարգար Մինասեան) և ներսում թողնելով ծանր վիրավորներ, բանկի մնացած 17 տղաները օգոստոսի 15-ին դուրս եկան դրամատանից և Մաքսիմովի ու Օսմանյան Դրամատան տնօրեն Սըր Էդգար Վենսենի և 2

փաշաների ուղեկցությամբ առաջնորդեցին դեպի Սըր Էդգարի անձնական զբոսանավը: Հաջորդ օրը տղաները փոխադրվում են ֆրանսիական «Ժիրոն» շոգենավը և նրանց ազատ թողնելու փոխարեն, ինչպես խոստացել էին Պոլսում, տեղափոխում են Սեն Փիերի բանտը: 17 օր պահում են բանտում ամենախիստ հսկողության տակ, ապա ազատ արձակվելով Հրաչն ու Արմեն Գարոն անցնում են Ժենև, մյուս 15-ը Նյու-Յորքի փոխարեն տեղափոխվում են Բուենոս Այրես, որտեղից վերադառնում են Լոնդոն [11, էջ 49]:

Օսմանյան Բանկի գրավման դեպքը լայն արձագանք գտավ միջազգային մամուլում: Բանկ ներխուժած տղաների եվրոպական կեցվածքը, մաքուր ֆրանսերենով խոսելը, նրանց անտարբերությունը բանկի բաց գանձարանի հանդեպ, նրանց խիզախությունը միջազգային հանրային կարծիքում համակրանքի ալիք առաջացրեցին: Ինչ վերաբերվում է թուրքական կորուստներին «Նյու-Յորք Հերլտ Թրիպին»-ը հաշվում է 450 սպանված զինվորներ, իսկ «Դեյլի Նյուզը» 400, «Թան»-ի թղթակիցը գրում է, որ զինվորական հիվանդանոցներում կան շուրջ 500 զինվորներ: Այս հանրային կարծիքի ճնշման տակ ֆրանսիական խորհրդարանը թնդաց հայանպաստ ցնցող ճառերով: Անգլիան ևս գնաց որոշ քայլերի, Ռուսաստանը նույնիսկ նավային հարձակման նախապատրաստություն ձեռնարկեց, սակայն իրականում ոչ մի շոշափելի արդյունք չեղավ: Այս հանդուգն նախաձեռնությունը, որ կարելի է համարել իր տեսակի մեջ առաջինը ցուցադրական ահաբեկչության համաշխարհային պատմության մեջ, չունենալով, սակայն, այն ցանկալի արդյունքը, որը նախատեսված էր և այդպես էլ մնաց անավարտ գործ:

Իրադարձությունները մանրամասն նկարագրված են «Դրոշակ»-ում:

Լևոն Նևրուզը գրում է. «*Կալաթա-Մարայի մոտ նետել էինք ամենամեծ ռումբերից մեկը, որը սպանել էր 37 զինվոր և 25-ի վիրավորել*» [11, էջ 49]:

Այս բոլորը, անկախ տված թվերից հավանական չափազանցությունների, փաստում են, որ դրամատան գրավման ձեռնարկին առընթեր նախաձրագրված ռմբակոծություններն ու կռիվները կարևոր չափով իրականացվել են օգոստոսի 14-ին և հաջորդ օրերին: Պոլսի Կ. Կոմիտեն ուրբաթ՝ օգոստոսի 16-ին «ազդագիր» է ուղարկում դեսպաններին: Օգոստոսի 19-ին սոլթանի զահակալության տարեդարձը բավականին անշուք է անցնում, դեսպանները մերժում են մասնակցել հրավառության հանդեսին և արգելվում է անգամ Բոսֆորի վրայով ավանդական նավարկության երթևեկը:

Օգոստոսի 14-ին և նրան հաջորդող գիշերվա ամենակատաղի և հերոսական կռիվները տեղի ունեցան Մամաթիոյում [11, էջ 50]:

Մինչև երեքշաբթի երեկո 154 ձեռնառումներ տեղափոխվում և ամբարվում են Սամաթիոյի գանազան կենտրոններում: Ըստ ծրագրի մի քանի հոգով պիտի հարձակվեին գորանոցի վրա, ստիպելով որ գորքը դուրս գար և հետապնդեին նախահարձակները, մինչև տներում ապաստանած տղաները ռումբերի տարափ պիտի տեղային զինվորների վրա: Այս ծրագիրը, սակայն, իրականացնել չհաջողվեց, քանզի որոշակի շարժում նկատելով, կամ միգուցե մատնության շնորհիվ ոստիկանությունը կեսօրի մոտ պաշարեց ողջ շրջանը, ձեռնարկեց խուզարկումներ: Ոստիկանությունը հասկապես փնտրում էր Խաչիկ Գնունուն, որն Արտաշես Անդրեասյանի հետ (Մուրեն) գտնվում էին Միսաքյանների տանը: Ժամը 6:30-ի մոտ լսվում է ռումբերի որոտը: Տղաները գանազան դիրքերից ռումբեր և հրացանների համազարկ տեղացին ոստիկանների և նրանց օգնության հասնող գորքի վրա: Մկավում է թաղային անխնա կռիվ, որը տևում է մինչև ուշ գիշեր: Տղաները լավ պաշտպանված էին և քիչ զոհեր ունեցան: Կռիվը վերսկսվում է առավոտյան ժամը 4-ին, բայց գորքը տեղի է տալիս և հարձակումը ժամանակավորապես դադարեցվում է և վերսկսվում առավոտյան ժամը 7-ին, զինվորներին հաջողվում է կացինով ջարդել վարժարանի դուռը, սպանել այնտեղ կռվող 3 տղաներից 2-ին և միևնույն ժամին հարձակվել Միսաքյանների տան ուղղությամբ և մեծ զոհերի գնով, ապա, համարելով շարքերը, ջարդում են տան դուռը և ներս խուժում, տղաներից 3-ը սպանվում են (Միսաքյան 2 եղբայրները և Հայկ Սրապյանը), իսկ Գնունին և Մուրենը իրենց ձեռքով վերջ են դնում իրենց կյանքին [11, էջ 50]: Գյուղի վիճակը հինգշաբթի առավոտ չափազանց տխուր էր՝ տները թալանված, կործանված ընտանիքներն էլ ջարդված էին: Այսպես վերջացավ Սամաթիայի հերոսական դիմադրությունը: Տղաներին չհաջողվեց իրագործել նախածրագրված ռազմական ծրագիրը պայմանների բերումով:

Միքայել Վարանդեանը գրում է.

«Շատ քիչ անգամ են ազգերի պատմության մեջ դավադրական ծրագրերն իրագործվել իրենց բոլոր մանրամասնություններով» [9, էջեր 139-140]:

Կարծում ենք լիովին ճշմարիտ է այս դատողությունը, մնում է դրան ավելացնել նաև, որ այս «դավադրական ծրագիրը» ի սկզբանե դատապարտված էր ձախողման, իր արկածախնդրական բնույթի և այս իրադրություն որպես հիմնական հասցեատեր հանդիսացող եվրոպական տերությունների իրական շահերը սխալ հաշվարկելու պատճառով:

«Դրոշակ»-ի խմբագրությանն ուղղված Վահայի նամակը պարունակում է նաև հուսախաբության և դառնության արտահայտու-

թյուններ, որոնց չի կարելի չանդրադառնալ հենց թեկուզ հանուն պատմական ճշմարտության: Դաշնակցության Պոլսի ներկայացուցիչը մատնանշում է Սև Աշոտի՝ վերջին պահի «դասալքության» և առանց Կ. Կոմիտեին որևէ բացատրություն տալու Պոլսից հեռանալը, խասգյուղացիների ցուցաբերած «երկչոտությունը», սակայն առավել ծանրակշիռ է նրա մեղադրանքները Բանկային գործին մասնակցած տղաների հասցեին:

Վռամյանը գրում է, և հարցադրում է անում, թե, միթե նրանք չգիտեին, որ քաղքի մյուս մասերում էլ կային կռվողներ, որոնց փրկության մասին ևս պետք էր հոգ տանել: Սամաթիացիները 18 ժամ շարունակ կռվել էին և կարելի էր նրանց ևս ազատել [11, էջ 18]:

Ծանր ու ճնշող էր հայության տրամադրությունների մթնոլորտը 1895-96-ին համիդյան կոտորածներից հետո բարենորոգումների ձգձգման ու անտեսման դառն իրականությունը ժողովրդի մի մեծ զանգվածի մղում էր հուսալքման ու անտարբերության դեպի ազգային-ազատագրական պայքարը: Ոմանք նույնիսկ հեղափոխականներին էին մեղադրում համիդյան ջարդերում:

Այս պայմաններում 1896-97 թթ. գումարված «Ընդհանուր» Ռայոնական ժողովը որոշում է նոր թափ տալ հեղափոխական գործունեությանը ուժերը կենտրոնացնել Բարձրավանդակի մեջ և արշավանք կազմակերպել թուրք-պարսկական սահմաններից ներս:

Արշավանքի գաղափարի իրականացումը, սակայն, ոչ անմիջական եղավ, ոչ էլ սահուն: Մեկը մյուսից տարբեր ու հաճախ հակադիր տեսակետներ ունեին ձեռնարկով ուղղակի շահագրգռված երկու շրջանների՝ Վասպուրականի և Ատրպատականի ղեկավարներն ու գործիչները: Արշավանքի գաղափարի հղացողը, պաշտպանողը և մինչև վերջ անհողողող հետապնդողը հանդիսացել է Նիկոլ Դումանը: Այս գաղափարին ընդդիմանում և խոչընդոտում էին մարտական մեծ համբավ ունեցող հայդուկներ՝ Վարդանը (Մեհրաբեան Սարգիս) և Հովսեփ Արդոթեանը: Նրանք ձեռնարկն անհնարին էին համարում և կողմնակից էին փոքր խմբերով Վասպուրական զենք փոխադրելուն: Հակասություններն այն աստիճան են սրվում, որ ՀՅԴ Բյուրոն ուղարկում է իր լիազոր ներկայացուցչին՝ Հարություն Ծախիկյանին, ով հաշտեցնելով կողմերին նշանակում է նաև արշավանքի ղեկավար կազմը, Նիկոլ Դումանին հաստատելով զուտ որպես հիմնապետ, իսկ արշավանքի հրամանատար է դառնում Վարդանը, իրեն օգնական վերցնելով Հովսեփ Արդոթեանին:

Արշավանքի նախապատրաստությունների մասին Նիկոլ Դումանի գրած նամակում կարդում ենք.

«Որոշում է ուժեղ գործունեություն ելրուպական Տանկաստանում եւ արշաւանք մեր կողմից: Առաջինը այն պատճառով, որ ելրուպական դիպլոմատիան բուռն կերպով միջամտում է եւ իր շահերը վնասելուց յետոյ: Բսկ իր շահերը կենտրոնացած են ելրուպ. Տանկաստանում և ոչ թե խոյ անկիւններում: Եւ որովհետև դիպլոմատիայի յուրջ ուշադրութեան գրաւումը առայժմ ընդունած է իբրև առանցք մեր գործունեութեան, այդ պատճառով որոշում է մեր կողմից տեղի ունենալիք գործունեութեան այնպիսի ձև տալ, որ լինի ուժեղ, ցնցող, սահմանի վրայ, որ մօտիկ լինի Սալմաստին, որպէսզի հատուկ թղթակցի միջոցով կարելի լինի տեղեկությունները թարմ-թարմ եւ ուռացած Ելրուպա հասցնել: Սահմանի վրայ մեր մարդիկ չեն լինի ուժասպառ, յոգնած, քաղցած, անքուն եւ փամփուշտների առատ պաշարից զուրկ, ուրեան կարող են աւելի լաւ կռել» [10, էջ 76]:

Խանասորի արշավանքի «ժողովրդականութեան» պատճառները վերլուծելով, Սիմոն Վրացեանը գրում է,- «Խանասորը եղավ առաջին կազմակերպված մեծածախ անարկտիկ - հետևանք, հեծելագոր, նոր ձևի հրացաններ գինվորական կանոնավոր կազմակերպություն. Պակասում էր միայն հրետանին, որպէսզի խումբը կանոնավոր բանակի մաս դառնար: Երկրորդ՝ առաջին խոշոր ու հաջող մարտական գործն էր, որ տեղի էր ունենում հայրենի հողի վրա, այն էլ հաղթական վահանանով» [2, էջ 48]:

Տրամադրությունները փայլուն չէին Պարսկաստանի դեկավարության և գործիչների մոտ 1897 թ. մայիս, հունիս ամիսներին: Անկախ դեպքերի և վճիռների ստեղծված հակադրությունից, տարակարծություններ գոյություն ունեին արշավանքի նպատակա-հարմարության մասին իսկ: Իշխան Հովսեփ Արղուրեանը, Վարդանը, Վազգենը, ինչպես նաև Վասպուրականի գործիչներից շատերը դեմ էին արշավանքի գաղափարին գտնելով, որ ավելի ձեռնառու է ռազմական ուժերը և ռազմամթերքը կենտրոնացնել Վասպուրականում կամ Մասունում՝ այստեղից ապստամբական շարժումներ սկսելու համար: Մինչդեռ բժիշկ Քրիստափոր Օհանեանը, Նիկոլ Դումանը, Գալուստ Արոյեանը և ուրիշներ տրամադրված էին անպայման իրականացնելու Ռայոնական ժողովի որոշումը՝ արշավանքի գծով: Երկարատև և բուռն վեճեր տեղի ունեցան հատկապես Սալմաստի կոմիտեի և Թավրիզի Կ. Կոմիտեի նիստերի ընթացքում: Վազգենը գրում է, -«Հայրուկների մեջ առաջացել է ընդհանուր դժգոհություն դեպի կոմիտեն և մասնավորապես դեպի Նիշտարը (բժ. Զ.Օհանեան) և Դումանը: Տաշոն (իշխան Յ. Արղուրեան) և Ծաղիկը (Մաթ. Մատինեան) իրենց կամքով հրաժարվել են անդամությունից և վերջապես ստեղծվել է մի տեսակ տանկասայերի և ռուսահայերի խնդիր՝ զգալի մեծամասնությունը տանկա-

հայերի կողմը լինելով, որոնց հետ կան և շատ ռուսահայեր» [2, էջեր 63-65]:

Հաստատ մնալով իրենց խոսքին, նրանք արշավանքից երկու շաբաթ առաջ 35 հոգով անցան Երկիր և միացան Աղբյուր Սերոբի խմբին [8, էջ 594]:

Այս պայմաններում էր, որ միևնույն օրերում (հուլիսի 5) Նիթրան (Յ. Շահրիկեան) Բյուրոյի կողմից գալիս է Ատրպատական ներքին անհամաձայնություններին վերջ տալու և արշավանքն արագացնելու հանձնարարությամբ [8, էջ 594]:

Այս ներքին անհամաձայնություններով հանդերձ, պատրաստությունները գրեթե ամբողջացված էին, պատրաստ էին 300 հրացաններ իրենց անհրաժեշտ պարագաներով, որոնց մի մասը Երկիր պիտի մտներ և արշավանքը սկսեր Շահրիկեանի միանալը անչափ նպաստեց գործի հաջողությանը,...

«Հոլիս 21-ն է արդեն: Արշավախումբը կազմ ու պատրաստ է: Տեղ հասավ վերջապես «լրտեսող» ջոկատը, որ գնացել էր ճանապարհները և թշնամու դիրքն ուսումնասիրելու: Բանակը տեղային անհամբերությամբ սպասում է առաջ խաղալու հրամանին...», - գրում է Վազգենը [11, էջ 49]:

Նրան հաջողվում է հանդարտացնել կովոդ կողմերին և գործի լծել արշավանքի հակառակորդներին և Վարդանին ու Իշխանին հրամանատար ընտրել: Հուլիսի 6-ի ժողովը որոշում է անմիջապես ձեռնարկել արշավանքի պատրաստությունները ու առանց ուշանալու և ամբողջ ուժով արշավանք կատարել:

Ընդհանուր հրամանատարն էր Վարդանը, օգնական Երվանդը, չնայած այդ գործի համար ամենահարմար թեկնածուն Նիկոլ Դումանն էր, որը, սակայն, հագիվ հիսունապետի պաշտոն ստացավ:

Բսկ հրամանատարական ու տասնապետական կազմի մասին տեղեկություններ քաղում ենք Իշխան Յ. Արղուրեանի հուլիսի 21-ին թվագրված հրահանգում:

«Ենթադրվում էր, - գրում է Ս. Վրացեանը, և Բյուրի ներկայացուցիչ Շահրիկեանը ուժգնորեն պնդում էր, որ արշավախումբը Երկիր մտնելուց հետո, մնա հնարավորինս երկար և շատ կռիվներ ունենա, որպէսզի կարողանա գրավել ելրուպական դիվանագիտության ուշադրությունը, սակայն դրան հակառակ գործը եղավ շատ կարճ ու կտրուկ» [11, էջ 49]:

Ամեն դեպքում արշավանքի առաջնահերթ նպատակն էր պատժել քուրդ Մագրիկ ցեղախմբին և նրա արյունարբու ցեղապետ Շարաֆ բեկին, որոնք բնակվում էին սահմանամերձ Արաուլ լեռան ստորոտում տարածվող Խանասուրի դաշտում: Շարաֆը 1894 թ.-ին բազմիցս հարձակվել է Դերիկի վրա համագործակցելով թուրք պետության հետ 1895-1896 թթ. կոտորածների ընթացքում, ավերել ու թալանել

են հատկապես Ադրախի գավառը և 1896 թ. ամռանը կարելով մասնակցություն ունեցել Ավետիսյանի գլխավորած Արմենականների խմբի ջարդին՝ Ս. Բարդուղեմեոս առաքյալի վանքի մերձակայքում:

«Ամիսներու լուրջ պատրաստութենէ ետք կը կազմուի 250 հոգիէ բաղկացած արշավախումբ մը, որուն հրամանատար կը նշանակուի Վարդան Մեհրաբեան:

1897 յուլիս 21-ի գիշերը Սարմաստի շրջանի Հավթուան գյուղի մեջ ֆետայիները կ'ընեն իրենց երդումը և ֆիտայի քահանայէնկը ստանան իրենց օրհնությունը: Հրամանատարը կը շեշտէ արշավանքին կարևորությունը, Նիկոլ Դումանկը յիշեցնէ ֆետայիի վեհաձևությունը՝ կանանց և երեխաներուն ձեռք տալու չէ վրիժառու ֆետան» [3, էջ 50]:

Արշավանքը սկսվում է 1897 թ. հուլիս 24-ի գիշերը (հին տոմարով) և Մազրիկ ցեղի ջարդը, փաստորեն, ավարտվում է հուլիսի 25-ին, սակայն, Շարաֆ բեկին հաջողվում է ճողոպրել կոտորածից: Հրամանատարության խիստ հրահանգով խնայվում է կանանց և երեխաների կյանքը: Բարձրացած աղմուկից մերձակա լեռները լցվում են քուրդ զինյաներով, և հեղափոխականների խումբը կռվելով նահանջում է դեպի Պարսկաստան, տալով 20 նահատակ:

Արշավանքի մանրամասն նկարագրությունը կարելի է տեսնել «Դրօշակ»-ի 1897 թ. 11, 12, 13 և հաջորդող համարներում, Միք. Վարանդեանի, Դիվանի Բ հատոր... և այլ հրատարակություններում [11; 2, էջեր 72-74; 9, էջեր 177-198]:

Արշավանքին մասնակցում են 2 քահանաներ՝ դարալագեագի Տեր Գրիգորը (Բիձա) և վասպուրականցի Տեր Վարդանը:

Խանասորի արշավանքից հետո թուրք կառավարության պահանջով պարսիկ իշխանությունները պարտավորվեցին դիմելու մի շարք խիստ միջոցների:

Բավականին ծանր վիճակ ստեղծվեց Ատրպատականի՝ հատկապես Սալմաստի հայության և Դաշնակցության զինվորների համար: Տեղի ունեցան հալածանքներ և ձերբակալություններ:

Ձերբակալվեց նաև Հովսեփ Արդուրյանը և պարսկական բանտերում մնաց ավելի քան 2 ամիս, ապա հանձնվեց ռուսական իշխանություններին՝ իբրև ռուսահպատակ և շուրջ 1 ու կես տարի մնաց Մետեխի բանտում, որից հետո արքայից Հաշտարիստուր, ապա Վոլոգդա ուր մնաց մինչև 1902 թ. [2, էջ 142; 12, էջեր 294-324]:

Ինչ վերաբերվում է արշավանքի արդյունքին, ապա լիովին ճշմարիտ է նկատում Ա. Ներսիսյանը,- «... տրված գոհերի, լայնածավալ նախապատրաստությունների և հաջորդող հալածանքների ու ձերբակալությունների հետ համեմատած արդյունքն, իհարկե, չնչին էր, սակայն այն

մեծ տպավորություն գործեց հասարակության վրա, որը ինչ-որ չափով հագեցրեց իր վրեժխնդրության ծարավը և այսքան կոտորածներից, ջարդերից ու նահատակներից հետո հայ մարդը տեսավ հայ քաջի պատմիչ ուժը, որը Հայ հեղափոխականությանը նոր թափ ու եռանդ տվեց» [7, էջ 258]:

Վրեժխնդրության նպատակով կազմակերպված հարձակողական բնույթի Խանասորի արշավանքը, կարելի է ասել, մասամբ արդյունավետ էր: Ջախջախվեց քրդական Մազրիկ ցեղը: Այդ մասին հետագայում Սարգիս Օհանջանյանի հետ հանդիպելիս խոստովանել է նաև Մազրիկ ցեղի առաջնորդ Շարաֆ աղան [1.1, էջ 11]:

Խանասորի արշավանքը դրականորեն է գնահատել նաև Խրիմյան Հայրիկը: Ըստ Հայկ Աճեմյանի, երբ Հայոց Հայրիկը լսում է արշավանքի մանրամասները, հուզմունքով ասում է. «Կեցցեն մեր յեղափոխականները. Ավելի աղէկ է, որ Խանասորներու մէջ զարնէք զարկուինք, արիւն թափենք, քան թէ պետութեանց պալատներու մէջ աղերսենք ու լանք...» [5, էջ 702]:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ ազատագրական պայքարի այս հարձակողական դրվագները, որոնք Դաշնակցության պատմության հիշարժան էջերից են, լայն տպավորություն գործելուց բացի ոչ մի էական նշանակություն չունեցան: Օսմանյան դրամատան գրավման գրծողությունների ժամանակ գերագնահատված էր այդ ձեռնարկի սպասվելիք արդյունքը, քանզի նման ահաբեկչական բնույթի ձեռնարկը չէր կարող հանգեցնել Մեծ տերությունների միջամտությանը հոգուտ հայոց շահերի և այն վկայությունները, որ եթե Բաբկեն Սյունին դրամատան մուտքի հարձակման առաջին զոհերից մեկը չդառնար, նախաձեռնությունը գուցե ունենար այլ ընթացք ու ավարտ. Օսմանյան Դրամատունը կայաթեցվեր իր, ավելի քան 150 եվրոպացի և թուրք պաշտոնյաներով, պալատական թարգման Հագգը բեյով և 26 քաջերով, սակայն հասկանալի է, որ այդ պարագայում անգամ եվրոպական ուժերի ցամաք հանումը և կամ եվրոպական դիվանագիտության տեղաշարժ ակնկալելը մեղմ ասած միամտություն էր:

Նույնը կարելի է ասել նաև Խանասորի արշավանքի մասին, որը վրեժխնդրական նշանակությունից բացի այլ նշանակություն չունեցավ:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)
 - 1.1. ՀԱԱ, Ֆ. 1457, ց. 2, գ. 16:
2. Գիւան Հ.Յ. Դաշնակցութեան, հ. Բ. - Պոսթըն, «Հայրենիք», 1938:

3. **Յեղափոխական Ալպոմ** (ազգային պայքարի յուշամատեն): - Լոս Անճելըս, 1968:
4. **Նիլթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան**, Ա հատոր: - Պէյրուիթ 1984:
5. **Աճեմյան Հ.**, Հայոց Հայրիկ: - Թավրիզ, 1927:
6. **Արմէն Գարօ**, Ապրուած օրեր: - Բոստըն, «Հայրենիք», 1948:
7. **Ներսիսյան Ա.**, Հ. Յ. Դաշնակցության պատմություն 1898-1908 թթ., հատոր Բ: - Բէյրուիթ, 2008:
8. **Սասունի Կ.**, Պատմություն Տարօնի աշխարհի: - Պէյրուիթ, 1957:
9. **Վարանդեան Մ.**, Դաշնակցութեան պատմութիւն: - Եր., 1992:
10. **Փամպուքեան Ե.**, Նիկոլ Դումանի նամականի: - Եր., 2021:
11. «**Դրօշակ**», N 7, N 21, N 28, 1896, N 11, N 12, N 13, 1897:
12. «**Հայրենիք**», թիւ 8, 1917:

Сдана/Հանձնվել է՝ 14.02.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 21.02.2024

Принята/Ընդունվել է՝ 28.02.2024